Նոր ստացուած գրքեր եւ հրատարակութիւններ

Խմբագրութիւնս ստացել է հետեւեալ նոր հրատարակութիւնները.

Հ. Առաքելեանի Հանրամատչելի դրադարանի XI գիրքը: Ձեռնարկ տարրական Տրամաբանութեան, Հոգեբանութեան և Բանահիւսութեան կազմ. Հ. Առաքելեան. տպուած է Թիֆլիս «Էպոխա» տպարանում 1907 թուին. 208 երես. գինն է 50 կոպէկ:

—Գ. Ենգիբարեան. Մատենախօսութիւն տպ. էլէքտրատպարան օր. Ն. Աղանեանի 1909 թ. 414 երես գինն է 1 ռ. 25 կ.

—Լումայ ամսագրի № 1 Յունուարի համարը:

—Նոր դպրոց ամսագրի № 1 յունուարի համարը:

Այս մանկավարժական թերթը, որ թեւակոխել է իւր գոյութեան երկրորդ տարին, հրատարակւում է Թիֆլիսում «Ուսուցչական Միութեան» վարչութեան ջանքերով և հետզհետէ աւելի հետաքրքիր է դառնում. սակայն նոյն Միութեան յայտարարութիւնից երևում է, որ մեր Ծխական դպրոցների ուսուցիչները այնքան էլ ջերմ աջակցութիւն չեն ցոյց տալիս դէպի այդ հայերէն մանկավարժական միակ ամսագիրը: Ուսուցիչների համար նշանակուած է տարեկան 3 ռ. բաժանորդագին: Մի՞թէ մեր մանուկ սերնդի դաստիարակ ուսուցիչները օրական 1 կոպէկ չեն կարող խնայել իրանց պարապմունքների համար անհրաժեշտ գիրքը ձեռք բերելու:

Մի՞թէ կարող են մեր ուսուցիչները իրանց նիւթական նեղ դրութիւնը պատճառ բռնելով հրաժարուել օրական 1 կոպէկի զոհողութիւնից: Մենք որքան գիտենք, մեր ծխական դպրոցներում (գիւղերում) 300ռ. պակաս ռոճիկ ստացող չկայ, ուրեմն դոքա պիտի տան ռոճկի 1% -ը: Արդ կարո՞ղ են և իրաւունք ունե՞ն նոքա հրաժարուել մտաւոր սնունդի համար 1% ծախսել, երբ 99% ծախսում են իրանց ստամոքսի և ֆիզիքական այլ պէտքերի համար: Մենք մեր կողմից յորդորում ենք մեր ուսուցիչներին արձագանք տալ Նոր-Դպրոցի Խմբագրութեան կոչին և թոյլ չտալ որ նա մեռնի, որի մահը ապացոյց է լինելու մեր ուսուցիչների անբնթերցասիրութեան:

—«Հասկեր» մանկական պատկերազարդ ամսագրի Ներկայ տարուայ 1 համարը, որ կազմուած է բաւական խնամքով ու հետաքրքրական մանուկների ընթերցանութեան համար: Նոյն

համարի հետ ուղարկուած էր «Վարդան Մամիկոնեանը Աւարայրի դաշտում» մեծադիր նկարը։

—«Աղբիւր» մանկական ամսագրի Ներկայ տարուայ առաջին համարը Գեղամինջիկ և Լև Տոլստոյեան համարի ձրի յաւելուածներով։ «Աղբիւրի» խմբագիրն յայտարարում է, որ հնարաւորութիւն ունի դպրոցական աշակերտներին և աշակերտուհիներին 1909 թուի ամբողջ տարուայ համարները (12 ամիս) ուղարկել 3 ռ. տեղ 1 ռուբլիով։ Գովելի է պ. Նազարեանի ջանքն ու եռանդը։ Յանձնարարում ենք ծնողներին օգտուել հանգամանքից և գոնէ այդպիսի ընչին գնով իրանց երեխաներին ունենալ մատակարարել արտաքոյ դպրոցի հանգստեան ժամերին։

—Էմինեան ազգագրական ժողովածուի Է. հատորը, որ պարունակում է 1. Ընդհանուր ազգագրական յօդուածներ և 2. Կոյլտուրի պատմութիւնը 3. Լիպպերտի. տպուած Մոսկուայում 1908 թ. 221 երես գինն է մի ռ.

—Տարեկան հաշիւ ազգային, կրօնական բարեգործական և կրթական հաստատութեանց Նոր Զուղայի վան 1906 ամի. տպուած 1908 ամի և Նոր Զուղայ։

—Հաշիւ Ալաչքալակի եկ. ծխական երկսեռ դպրոցների 1905—6, 1906—7. 1907—8, ուս. տարուայ։ Տպուած 1908 թուին։